Օրգանական գյուղատնտեսության զարգացումը հանուն կայուն ապագայի

Ի՞նչ է կայուն գյուղատնտեսությունը

Գյուղատնտեսությունը կենսական ոլորտ է համաշխարհային տնտեսության, պարենային անվտանգության և կայունության համար:

Այնուամենայնիվ, ավանդական գյուղատնտեսական գործելակերպերը հաճախ հանգեցնում են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության, ինչպիսիք են՝ դեգրադացիան, հողի քայքայումը և ցածր արտադրողականությունը:

Կայուն գյուղատնտեսությունը գյուղատնտեսության վարման այնպիսի մոտեցում է, որն առաջնահերթություն է տալիս բնական և վերականգնվող աղբյուրներին, քան սինթետիկ պարարտանյութերին և թունաքիմիկատներին:

Կայուն գյուղատնտեսությունը ձգտում է «բավարարել ներկա և ապագա սերունդների կարիքները՝ միաժամանակ ապահովելով շահութաբերություն, շրջակա միջավայրի առողջություն, սոցիալական և տնտեսական հավասարություն»:

Կայուն գյուղատնտեսությունը կիրառում է գյուղատնտեսական գործունեության էկոլոգիապես անվնաս մեթոդներ, որոնք ընձեռում են մարդկային և բնական համակարգերի համար անվնաս բուսաբուծական և անասնապահական արտադրանք ստանալու հնարավորություն:

Կայուն գյուղատնտեսության հիմնական խնդիրն ու նպատակն է կանխարգելել բացասական ազդեցությունը հողի, ջրի, կենսաբազմազանության, շրջապատի և շղթայի հաջորդ օղակների ռեսուրսների, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունում կամ դրա շրջակայքում ապրող և աշխատող մարդկանց վրա:

Առանձնացվում են կայուն գյուղատնտեսության հետևյալ հիմնական նպատակները, որոնք բոլորն էլ ունեն միևնույն էությունը՝ բավարարել մարդկանց սննդի կարիքները՝

1. **ֆերմերների համար տնտեսական շահութաբերություն,**
2. **շրջակա միջավայրի պահպանության խթանում,**
3. **ֆերմերների, նրանց համայնքների և նրանց կենդանիների բարեկեցության բարձրացում:**

Ինչու՞ է կայուն գյուղատնտեսությունն այդքան կարևոր

Համաշխարհային պարենային համակարգի ամենամեծ խնդիրն է՝ պարզել, թե ինչպես արտադրել բավարար սնունդ մոտ 10 մլրդ մարդու համար, որոնք կբնակեցնեն մոլորակը մինչև 2050 թվականը: Վերջին հարյուրամյակի ընթացքում պարենային համակարգը կարողացել է ավելի շատ սնունդ արտադրել արդյունաբերականացման ոլորտում՝ մեծ հողատարածքների օգտագործմամբ, առավելագույն արդյունավետությամբ և բարձր բերքատվությամբ, պարարտանյութերի և թունաքիմիկատների լայնածավալ օգտագործմամբ, սակայն այդ ընթացքում ընդլայնվել է գյուղատնտեսական հողերի և անտառների դեգրադացումը, ավելացել են ջերմոցային գազերի զանգվածային արտանետումները, անտառահատումները և աղտոտումը:

Քանի որ կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի փսասների հետևանքներն արագանում են, պարենային համակարգերի հետազոտությունները ցույց են տալիս, որ մեր բնական պաշարների պահպանումը, ներառյալ սնունդ աճեցնելու կարողությունը, չափազանց կարևոր է: Կայուն գյուղատնտեսությունը նպատակ ունի ապահովել համարժեք կարճաժամկետ բերքատվություն՝ առանց շրջակա միջավայրին երկարաժամկետ փսաս պատճառելու:

Այսպիսիով, համաշխարհային պարենային համակարգի վերափոխումը դառնում է ժամանակի մարտահրավեր՝ բնակչությանն ավելի արդյունավետ սնուցելու, բնական պաշարները պահպանելու, կենդանիների բարեկեցությունը խթանելու և միլիարդավոր ֆերմերներին և սննդի համակարգի աշխատողներին կայուն ապրուստ ապահովելու համար, որի համար ներկայումս հիմք են ծառայում ագրոէկոլոգիական համակարգերի վրա հիմված մոտեցումները:

Ագրոէկոլոգիայի հիմնական սկզբունքն է սիներգիաների ստեղծումը, որը բազմաթիվ առավելություններ է տալիս սննդի արտադրության համակարգերին: Սիներգիաներն ուժեղանում են, երբ մշակաբույսերը, կենդանիները և ջրային կուլտուրաները համատեղվում են փոխշահավետ ձևերով: Օրինակ, բրնձի մշակումը նաև նպաստում է ջրային կուլտուրաների և ծառերի աճին, ինչպես նաև կարող է էկոլոգիապես առողջ լուծումներ ապահովել հողի էրոզիայի, փսասատուների դեմ պայքարի և սննդանյութերի ցիկլերի համար:

Ագրոէկոլոգիայում հիմնական առավելություններից է նաև վերամշակումը, որն ընդօրինակում է էկոլոգիական գործընթացները ինչպես փոքր, այնպես էլ մեծ մասշտաբներով՝ նվազեցնելու թափոնները, աղտոտվածությունը և սննդանյութերի կորուստը:

Ագրոէկոլոգիայի հիմքում ընկած է պատասխանատու կառավարումը, որը պահանջում է քաղաքականություններ և օրենքներ՝ աջակցելու ագրոէկոլոգիական

անցումներին բազմաթիվ մակարդակներում՝ թափանցիկության, ներառականության և հաշվետվողականության բարձրացման միջոցով: Ազգային և տեղական քաղաքականությունը կարող է խթանել ագրոէկոլոգիական գործելակերպը, մինչդեռ համայնքային մակարդակով ծրագրերը կարող են աջակցել ֆերմերների հզորացմանը և գիտելիքների փոխանակմանը: Հողի և բնական պաշարների արդար կառավարումն անհրաժեշտ է սննդամթերքի հասանելիության և ֆերմերների կայուն ապրուստն ապահովելու համար:

Ագրոէկոլոգիայի կապն օրգանական գյուղատնտեսության հետ

Օրգանական գյուղատնտեսությունը նպաստում է էկոլոգիական հավասարակշռությանը ծածկույթային մշակաբույսերի, մշակաբույսերի ցանքաշրջանառության և կանաչ ու կենդանական գոմաղբի օգտագործման միջոցով: Օրգանական ֆերմերները խուսափում են սինթետիկ պարարտանյութերից, թունաքիմիկատներից, հորմոններից և հակաբիոտիկներից: Որպես այդպիսին, օրգանական գյուղատնտեսությունը համընկնում է ագրոէկոլոգիայի բազմաթիվ նպատակների հետ՝ կապված ագրոէկոհամակարգերի առողջության հետ:

Այսօր օրգանական գյուղատնտեսությունը համարվում է սննդարդյունաբերության ամենաարագ զարգացող ճյուղերից մեկը, և օրգանական մթերքն ունի իր կայուն տեղը սննդամթերքի համաշխարհային շուկայում: Այն համարվում է եկամտաբեր ոլորտ, քանի որ օրգանական մթերքն ունի ավելի բարձր գին, քան ինտենսիվ գյուղատնտեսությամբ ստացված մթերքները:

Հայաստանում օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվելու համար հավաստագրվել է շուրջ 100 տնտեսավարող սուբյեկտ, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում առկա է զարգացման մեծ ներուժ: Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ մեծ աշխատանքներ են տարվում տեղական և միջազգային մի շարք կազմակերպությունների կողմից, որոնք նպատակ ունեն նպաստելու Հայաստանում կայուն և օրգանական գյուղատնտեսության զարգացմանը:

Հարկ է նշել, որ Հայաստանի օրգանական գյուղատնտեսության ոլորտի օրենսդրական դաշտը կարգավորված է: Գործում են «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքը և օրենքի կիրարկումն ապահովող մի շարք ենթաօրենսդրական իրավական ակտեր: Գործում է նաև օրգանական գյուղատնտեսության և սննդամթերքի արտադրության սերտիֆիկացման մարմին՝ «Էկոգլոբ» ՍՊԸ-ն, որը ունի միջազգային հավատարմագրում և իրականացնում է օրգանական

սերտիֆիկացում հողի, բուսական և կենդանական արտադրության մթերքների, ինչպես նաև վայրի պտուղների հավաքի, մեղվապահության, գինու և այլ ոլորտներում տարբեր շուկաների համար՝ ՀՀ, ԵՄ, Շվեյցարիա, ԱՄՆ, Կանադա և այլն:

Հայ օրգանական մթերք արտադրողները հնարավորություն են ստացել մասնակցելու միջազգային օրգանական տոնավաճառներին: Աջակցության գործառույթները, այդ թվում՝ վերապատրաստման և սերտիֆիկացման ծառայություններն, իրականացվել են օրգանական գյուղատնտեսությանն աջակցող կառույցների դասընթացների միջոցով: Ֆերմերներին, ֆերմերային խմբերին, կոոպերատիվներին և վերամշակողներին տրամադրվել է ֆինանսական և տեխնիկական աջակցություն՝ հանգեցնելով օրգանական արժեշղթայի մասնակիցների և ծավալների զգալի աճի:

Սույն տեղեկատվական նյութը պատրաստվել է «Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմադրամի կողմից՝ «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմադրամի (GGF) կողմից ֆինանսավորվող «Կոտայքի մարզի խոցելի գյուղաբնակ կանանց հնարավորության ընձեռում՝ օգտվելու տնտեսական և բնապահպանական հնարավորություններից» ծրագրի շրջանակում:

«Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմադրամ
ՀՀ, ք. Երևան, Շինարարների փող. 18, բն. 52
Էլ. փոստ՝ info@ruraldaf.am
Վեբ կայք՝ http://www.ruraldaf.am

ԵՐԵՎԱՆ 2024